ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/131/2024

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 27 մայիսի 2024թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2024 թվականի մայիսի 27-ին քննելով ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու անդամ Նորիկ Վանիկի Վարդանյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/131/2024 գործը՝

ՊԱՐԶԵՑ

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված իրավակարգավորումներով, ինչպես նաև հիմք ընդունելով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) 2022 թվականի տարեկան հաշվետվության (այսուհետ՝ Կուսակցության տարեկան հաշվետվություն) ստուգման արդյունքում վերհանված

տվյալները, իրականացրել է ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու անդամ Նորիկ Վանիկի Վարդանյանի՝ 2023 թվականի մայիսի 29-ին ներկայացված 2022 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) հայտարարագրված տվյալների ստուգում, որի արդյունքում պարզել է.

1) Նորիկ Վանիկի Վարդանյանը Հայտարարագրի «Գ.1. Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնի «Գ.1.1.Հաշվետու տարվա եկամուտներ» ենթաբաժնում հայտարարագրել է 1,137,000 ՀՀ դրամի չափով աշխատավարձ, մինչդեռ, փոխգործելիության հարթակի միջոցով Պետական եկամուտների կոմիտեից ստացված տվյալների համաձայն՝ 2022 թվականին Նորիկ Վարդանյանը ստացել է ԱՁ գործունեությունից եկամուտ՝ 900,000 ՀՀ դրամի, «ՍԵՖԷՄՄ» ՍՊԸ-ից աշխատավարձ 90,000 ՀՀ դրամի և շահաբաժին՝ 739,100 ՀՀ դրամի չափով (ներառյալ հարկերը և (կամ) պարտադիր այլ վճարները):
2) Նորիկ Վարդանյանի կողմից ներկայացված բացատրության համաձայն՝ 2021 թվականի հոկտեմբերի 29-ին «Նարինե Վարդանյան և ընկերներ» ԼՏԸ-ից հետ է ստացել 4,000,000 (չորս միլիոն) ՀՀ դրամի չափով փոխառություն, մինչդեռ նշված կանխիկ դրամական միջոցների վերաբերյալ տվյալը չի հայտարարագրել «Բ.6 Դրամական միջոցներ» բաժնի «Բ.6.5. Կանխիկ դրամ» ենթաբաժնում («Տվյալ տարվա սկզբում առկա կանխիկ դրամի գումարը և արժույթը» սյունակում):

1.2 Հանձնաժողովը, Հայտարարագրում չներկայացված տվյալների հիմքով Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ նախաձեռնելու որոշման կապակցությամբ 2024 թվականի մայիսի 14-ին Նորիկ Վանիկի Վարդանյանին հասցեագրել է թիվ 01/1361-2024 ծանուցումը՝ այն ստանալուց հետո՝ երրորդ օրը, ժամը՝ 11:00-ին հրավիրելով Հանձնաժողով վերոնշյալ առերևույթ խախտման վերաբերյալ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու, իսկ հինգերորդ օրը, ժամը՝ 11:00-ին՝ առերևույթ իրավախախտման հիմքով կազմված արձանագրության և վերաբերելի

նյութերի հիման վրա վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու:

1.3 Ի պատասխան Հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 17-ի թիվ 1/1216-2024 գրության՝ 2024 թվականի ապրիլի 26-ին Նորիկ Վարդանյանի կողմից մուտքագրված թիվ Մ-1918-2024 գրությամբ ներկայացվել է պարզաբանում:

1.4 2024 թվականի մայիսի 23-ին ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու անդամ Նորիկ Վանիկի Վարդանյանի ներկայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/143/24 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշով:

1.5 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Նորիկ Վանիկի Վարդանյանի բացակայությամբ 2024 թվականի մայիսի 27-ին՝ ժամը՝ 11:00-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Ի պատասխան Հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 17-ի թիվ 01/1216-2024 գրության՝ 2024 թվականի ապրիլի 26-ին Հանձնաժողով մուտքագրված թիվ Մ-1918-2024 գրությամբ Նորիկ Վարդանյանը ներկայացրել է պարզաբանում առ այն, որ իր կողմից ներկայացված 2022թ տարեկան հաշվետվության մեջ, առկա են բավարար կանխիկ ֆինանսական միջոցներ, որպեսզի կարողանար իրեն թույլ տալ նվիրաբերել իր կողմից համակրելի կուսակցությանը մեկ միլիոն ՀՀ դրամ: Իսկ 2022թ. հաշվետու տարվա բանկային հաշվի քաղվածքների վերաբերյալ հայտնել է, որ քանի որ տվյալ ժամանակահատվածում դեռ չի գործել անկանխիկ գործարքների վերաբերյալ օրենքը, աշխատավարձ, շահաբաժին և այլ գումարներ ստացել է կանխիկ եղանակով: Նշել է նաև, որ բանկային քարտը ձեռք է բերվել 2022թ հոկտեմբերի 19-ն ՎՏԲ Արմենիա ՓԲԸ, որի քաղվածքը տրամադրելու համար անհրաժեշտ է լրացուցիչ ժամանակ: Միաժամանակ, 2024 թվականի մայիսի 23-ին վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/143/24 արձանագրության կազմման

ժամանակ Նորիկ Վանիկի Վարդանյանը ներկայացրել է,որ հետ է ստացել 2021 թվականի հոկտեմբերի 29-ին «Նարինե Վարդանյան և ընկերներ» ԼՏԸ-ից 4,000,000 (չորս միլիոն) ՀՀ դրամի չափով փոխառություն, որը մոռացության պատճառով չի հայտարարագրել 2022 թվականի տարեկան հայտարարագրում: Վերը նշվածը հիմնավորելու համար ներկայացրել է N217 դրամարկղային ելքի օրդերը:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/131/2024 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

1) Նորիկ Վանիկի Վարդանյանը Հայտարարագրի «Գ.1. Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնի «Գ.1.1.Հաշվետու տարվա եկամուտներ» ենթաբաժնում հայտարարագրել է 1,137,000 ՀՀ դրամի չափով աշխատավարձ, մինչդեռ, փոխգործելիության հարթակի միջոցով Պետական եկամուտների կոմիտեից ստացված տվյալների համաձայն՝ 2022 թվականին Նորիկ Վարդանյանը ստացել է ԱՁ գործունեությունից եկամուտ՝ 900,000 ՀՀ դրամի, «ՍԵՖԷՄՄ» ՍՊԸ-ից աշխատավարձ 90,000 ՀՀ դրամի և շահաբաժին՝ 739,100 ՀՀ դրամի չափով (ներառյալ հարկերը և (կամ) պարտադիր այլ վճարները):
2) Նորիկ Վարդանյանի կողմից ներկայացված բացատրության համաձայն՝ 2021 թվականի հոկտեմբերի 29-ին «Նարինե Վարդանյան և ընկերներ» ԼՏԸ-ից հետ է ստացել 4,000,000 (չորս միլիոն) ՀՀ դրամի չափով փոխառություն, մինչդեռ նշված կանխիկ դրամական միջոցների վերաբերյալ տվյալը չի հայտարարագրել «Բ.6 Դրամական միջոցներ» բաժնի «Բ.6.5. Կանխիկ դրամ» ենթաբաժնում («Տվյալ տարվա սկզբում առկա կանխիկ դրամի գումարը և արժույթը» սյունակում):

Հանձաժողովը հաստատված է համարում, որ Հայտարարագրում առկա են սխալ և ոչ ամբողջական ներկայացված տվյալներ:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու անդամ Նորիկ Վանիկի Վարդանյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը սահմանող) 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող **դրամական միջոցները** (այդ թվում՝ բանկային հաշիվներում առկա):

4.3 Օրենքի 41-րդ հոդվածի (Եկամուտների հայտարարագրի բովանդակությունը սահմանող) 1-ին մասի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է սույն հոդվածով սահմանված եկամուտները և դրանց ստացման աղբյուրները: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված հետևյալ **եկամուտները՝** *աշխատանքի վարձատրությունը կամ դրան հավասարեցված այլ վճարումները,*(…) *ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտը,* (…):

4.4 Օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը ներկայացվում են պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրվա դրությամբ: Տարեկան հայտարարագիրը ներկայացվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից՝ տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար:

4.5 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.6 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի

Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.8 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.9 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.10 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.11 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են նաև հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները: Հայտարարատուն հնարավորություն ունի ընտրել կոնկրետ ***գույքի տեսակը, դրա վերաբերյալ այլ տեղեկություններ, եկամտի տեսակը, դրա վերաբերյալ այլ տեղեկություններ,*** շահերի դեպքում՝ կազմակերպության անվանումը, կազմակերպությունում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության չափը, հավատարմագրային կառավարման հանձնված լինելը և այլ տեղեկություններ:

Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման **ենթակա տվյալը** լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, Օրենքով պահանջվող ***հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:***

Սույն գործով ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու անդամ Նորիկ Վանիկի Վարդանյանը Հայտարարագրում ***անզգուշությամբ*** ներկայացրել է հետևյալ սխալ և ոչ ամբողջական տվյալները.

Նորիկ Վանիկի Վարդանյանի կողմից Հայտարարագրի «Գ.1. Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնի «Գ.1.1.Հաշվետու տարվա

եկամուտներ» ենթաբաժնում հայտարարագրված է 1,137,000 ՀՀ դրամի չափով աշխատավարձ, մինչդեռ, փոխգործելիության հարթակի միջոցով Պետական եկամուտների կոմիտեից ստացված տվյալների համաձայն՝ 2022 թվականին Նորիկ Վարդանյանը ստացել է ԱՁ գործունեությունից եկամուտ՝ 900,000 ՀՀ դրամի, «ՍԵՖԷՄՄ» ՍՊԸ-ից աշխատավարձ 90,000 ՀՀ դրամի և շահաբաժին՝ 739,100 ՀՀ դրամի չափով (ներառյալ հարկերը և (կամ) պարտադիր այլ վճարները):

2) 2024 թվականի մայիսի 23-ին վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/143/24 արձանագրության կազմման ժամանակ վարույթի մասնակցի կողմից ներկայացված բացատրության համաձայն՝ 2021 թվականի հոկտեմբերի 29-ին «Նարինե Վարդանյան և ընկերներ» ԼՏԸ-ից հետ է ստացել 4,000,000 (չորս միլիոն) ՀՀ դրամի չափով փոխառություն, մինչդեռ, նշված գումարի վերաբերյալ տվյալ չի հայտարարագրել «Բ.6 Դրամական միջոցներ» բաժնի «Բ.6.5. Կանխիկ դրամ» ենթաբաժնում («Տվյալ տարվա սկզբում առկա կանխիկ դրամի գումարը և արժույթը» սյունակում):

Հաշվի առնելով արձանագրված իրավախախտումների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջները՝ սույն գործով առկա փաստերից հետևում է, որ Նորիկ Վանիկի Վարդանյանը Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է սխալ և ոչ ամբողջական տվյալներ, որի արդյունքում թույլ է տրվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարք:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյո՞ք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն գործով էական հանգամանք է այն, որ Նորիկ Վանիկի Վարդանյանի կողմից ԱՁ գործունեությունից, «ՍԱՖԷՄՄ» ՍՊԸ-ից ստացած

աշխատավարձից և շահաբաժնից ստացված եկամուտների վերաբերյալ տվյալները բացակայում են վերջինիս կողմից ներկայացված Հայտարարագրի «Գ.1. Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնի «Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ» ենթաբաժնում, ինչպես նաև կանխիկ դրամական միջոցների վերաբերյալ տվյալը բացակայում է «Բ.6 Դրամական միջոցներ» բաժնի «Բ.6.5. Կանխիկ դրամ» ենթաբաժնում («Տվյալ տարվա սկզբում առկա կանխիկ դրամի գումարը և արժույթը»):

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն, որ իր կողմից նախորդիվ կայացրած որոշումներով (Հանձնաժողովի՝ 2021 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԻՎ/08/2021, 2021 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԻՎ/11/2021 որոշումներ) սխալ և ոչ ամբողջական տվյալների հայտարարագրման հետ կապված նվազ նշանակության են որակվել այն դեպքերը, երբ պաշտոնատար անձի չհայտարարագրած եկամուտը չի գերազանցել նրա պաշտոնեական դրույքաչափի համար սահմանված աշխատավարձը:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով խախտումը կատարվել է այնպիսի փաստական հանգամանքների համադրությամբ, որոնք նույնական չեն նախորդող վարչական ակտերում առկա փաստական հանգամանքների հետ: Մասնավորապես, սույն դեպքում Հանձնաժողովն էական է համարում այն հանգամանքը, որ եկամուտների ոչ ամբողջական հայտարարագրման հետևանքով Կուսակցությանը նվիրատվություն կատարելը չի հիմնավորվել վերջինիս կողմից հայտարարագրված օրինական եկամուտներով: Միաժամանակ, Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն դեպքում Հայտարարագրում սխալ և ոչ ամբողջական են ներկայացված *մի քանի աղբյուրից՝ աշխատավարձից և ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտների վերաբերյալ տվյալներ:*

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը սահմանող) 1-ին մասով սահմանված իրավակարգավորումների համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող **դրամական միջոցները** (այդ թվում՝ բանկային հաշիվներում առկա): Մինչդեռ, տվյալ պարագայում Հանձնաժողովն արձանագրում է, որ ստացված կանխիկ դրամական

միջոցների վերաբերյալ տվյալները ամբողջական կերպով ներկայացված չեն Նորիկ Վանիկի Վարդանյանի Հայտարարագրում, ուստի Հանձաժողովը հաստատված է համարում, որ Հայտարարագրում առկա են ոչ ամբողջական ներկայացված տվյալներ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի 41-րդ հոդվածի (Եկամուտների հայտարարագրի բովանդակությունը սահմանող) 1-ին մասով սահմանված իրավակարգավորումների համաձայն՝ հայտարարագրում պետք է ներառվեն հաշվետու տարվա ընթացքում ***ստացված բոլոր եկամուտները և դրանց ստացման աղբյուրները***: Մինչդեռ, տվյալ պարագայում Հանձնաժողովն արձանագրում է, որ ստացված եկամուտների վերաբերյալ տվյալները ամբողջական կերպով ներկայացված չեն Նորիկ Վանիկի Վարդանյանի Հայտարարագրում, ուստի Հանձաժողովը հաստատված է համարում, որ Հայտարարագրում առկա են սխալ և ոչ ամբողջական ներկայացված տվյալներ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (***փուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով***), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք, ինչպես նաև առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով

սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Նորիկ Վանիկի Վարդանյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ **200 000** (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական **900005001335** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նորիկ Վանիկի Վարդանյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Նորիկ Վանիկի Վարդանյանին տրամադրել եռօրյա ժամկետ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղումներ կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ